

39. Արարատյան ջրավազանային կառավարման տարածքում ջրօգտագործման պահանջարկի գնահատումն ըստ ոլորտների իրականացվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից, ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզպետարաններից, ՀՀ բնապահպանության նախարարությունից և այլ համապատասխան գերատեսչություններից ստացված տվյալների հիման վրա:

1) Արարատյան ջրավազանում, ընդհանուր ջրօգտագործման պահանջարկի (հենակետային վիճակի և ըստ առանձին ոլորտների ջրօգտագործման) գնահատումն իրականացվել է 2015թ. հունվարի դրությամբ՝ հիմք ընդունելով ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից տրամադրված ջրօգտագործման թույլտվություններով սահմանված ջրօգտագործման ծավալները, որոնցով ձևավորվում է ջրապահանջարկը: Որպես գնահատման վերջնարդյունք՝ տրվել է ջրապահանջարկի տնտեսական գնահատականը տարբեր ոլորտների համար և յուրաքանչյուր ոլորտի կողմից 1 մ<sup>3</sup> ջրին ընկնող ավելացված արժեքը: Ծախսային և եկամտային մոտեցումների հիման վրա կատարվել են ջրօգտագործման պահանջարկի տնտեսական վերլուծությունը և արդյունավետության գնահատումը: Ընդ որում ծախսային մոտեցման հիմքում ընկած է ջրօգտագործման վճարը, որը սահմանվում է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի (1998թ.) և «Բնօգտագործման վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ կառավարության թիվ 864 որոշմանը (1998թ.) համաձայն: Այն չի ներառում կազմակերպությունների կողմից ջրօգտագործման ընդհանուր արժեքը, քանի որ հաշվարկներում հաշվի չեն առնված կապիտալ և գործառնական ծախսերը: Նաև, չեն ներառվել հասարակության էքստերնալ ծախսերը, քանի որ հաշվարկների համար բավարար և հավաստի տվյալները բացակայում են կամ հասանելի չեն: Եկամտային մոտեցումը հիմնվում է ըստ ԶԹ-ների ջրապահանջարկի ծավալների և Արարատյան ջրավազանի տնտեսության ոլորտների համախառն եկամուտների վրա: Այդ մոտեցման արդյունքում գնահատվում է Արարատյան ջրավազանում ջրօգտագործման յուրաքանչյուր ոլորտի կողմից ստեղծված տնտեսական արժեքը (ավելացված արժեքը)՝ 1 մ<sup>3</sup> օգտագործված ջրի դիմաց:

#### **40. Առկա իրավիճակի վերլուծությունը**

1) Զրօգտագործման պահանջարկը Արարատյան ԶԿՏ-ում կազմել է 1060469.2 հազ. մ<sup>3</sup> (2015թ. հունվարի դրությամբ): Ընդ որում Ազատի գետավազանում այն կազմել է ընդհանուր պահանջարկի 18.6%-ը, Վեդիի գետավազանում՝ 13.5%-ն, իսկ Արփայի գետավազանում՝ 67.9%:

2) 2015թ. հունվարի դրությամբ Արարատյան ԶԿՏ-ում ջրապահանջարկի կառուցվածքն ըստ ջրօգտագործման ոլորտների և գետավազանների ներկայացված է Աղյուսակ 10.1-ում:

Արարադյան ՋԿՏ-ում ջրօգտագործման պահանջարկն ըստ ոլորտների 2015թ. հունվարի դրությամբ, հազ. մ<sup>3</sup>

Աղյուսակ 10.1

|   | Խմելու-կենցաղային | Ոռոգում | Ձկնաբուծություն | Արդյունաբերություն | Ջրաբերիացում | Հիդրոէներգետիկա | Ընդամենը  |
|---|-------------------|---------|-----------------|--------------------|--------------|-----------------|-----------|
| Ազատի գետավազան                               | 8041.6            | 108630  | 899.4           | 150.2              | 650.6        | 79000.0         | 197371.8  |
| գետավազանում ընդհանուր պահանջարկի մասնաբաժինը | 4.07%             | 55.04%  | 0.45%           | 0.07%              | 0.33%        | 40.04%          | 100%      |
| Վեդիի գետավազան                               | 14475             | 108720  | 15717.7         | 3184               | 749.3        | -               | 142846    |
| գետավազանում ընդհանուր պահանջարկի մասնաբաժինը | 10.1%             | 76.1%   | 11%             | 2.22%              | 0.52%        | -               | 100%      |
| Արփայի գետավազան                              | 14758.8           | 73180   | 11618.6         | 55.9               | 638.1        | 620000          | 720251.4  |
| գետավազանում ընդհանուր պահանջարկի մասնաբաժինը | 2.05%             | 10.16%  | 1.61%           | 0.01%              | 0.09%        | 86.08%          | 100%      |
| Արարատյան ՋԿՏ                                 | 37275.4           | 290530  | 28235.7         | 3390.1             | 2038         | 699000          | 1060469.2 |

Աղբյուր՝ ՀՀ ԲՆ ՋՌԿԳ

3) 2015թ. հունվարի դրությամբ, Արարատյան ՋԿՏ-ում ջրօգտագործման պահանջարկի ծախսային եղանակով գնահատման արդյունքները ներկայացված են Աղյուսակ 10.2-ում:

Արարադյան ՋԿՏ-ում 2015թ. հունվարի դրությամբ ջրօգտագործման պահանջարկի ծախսային եղանակով գնահատման արդյունքները (հազ. ՀՀ դրամ)

Աղյուսակ 10,2

|  | Ջրօգտագործման արդյունք | Խմելու-կենցաղային | Ոռոգում | Ձկնաբուծություն | Արդյունաբերություն | Ջրաբերիացում | Հիդրոէներգետիկա | Ընդամենը |
|--|------------------------|-------------------|---------|-----------------|--------------------|--------------|-----------------|----------|
| <b>Ջրօգտագործման պահանջարկը, հազ.մ<sup>3</sup></b> |                        |                   |         |                 |                    |              |                 |          |
| <b>Ազատի գետավազան</b>                             | Մակերևութային          | -                 | 94970   | 630,9           |                    | 650,6        | 79000.0         | 175251.8 |
|  | Ստորերկրյա             | 8041,6            | 13660   | 268,42          | 150,2              |              | -               | 22120,2  |
| <b>Վեդիի գետավազան</b>                             | Մակերևութային          | -                 | 84460   | 7174,4          | 504                | 749,3        | -               | 92887,7  |
|  | Ստորերկրյա             | 14475             | 24260   | 8542,8          | 2680               |              | -               | 49957,8  |
| <b>Արփայի գետավազան</b>                            | Մակերևութային          | -                 | 73180   | 8641,2          | 29,35              | 638,1        | 620000.0        | 702488.6 |
|  | Ստորերկրյա             | 14758,8           | -       | 2977,4          | 26,56              |              | -               | 17762,8  |

|   |  |         |        |         |        |        |         |           |
|---|--|---------|--------|---------|--------|--------|---------|-----------|
| Արարատյան ՋԿՏ                             |  | 37275,4 | 290530 | 28235,7 | 3390,1 | 2038   | 6999000 | 1060469.2 |
| <b>Ջրօգտագործման վճարը, հազ. ՀՀ դրամ</b>  |  |         |        |         |        |        |         |           |
| Ազատի գետավազան                           |  | 402,08  | 0      | 197,3   | 150,2  | 325,3  | 0       | 1074,9    |
| Վեդիի գետավազան                           |  | 723,75  | 0      | 4988,84 | 2932   | 374,7  | 0       | 9019,3    |
| Արփայի գետավազան                          |  | 737,94  | 0      | 11618,6 | 41,2   | 319,1  | 0       | 12716,9   |
| Արարատյան ՋԿՏ                             |  | 1863,8  | 0      | 16804,7 | 3123,4 | 1019,1 |         | 22811,0   |
| Ավելացվածարժեքը՝ ՀՀ դրամ/1 մ <sup>3</sup> |  | 0,05    | 0      | 0,60    | 0,92   | 0,50   | 0       |           |

Աղբյուր՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք (1998թ.),  
«Բնօգտագործման վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ կառավարության N 864 որոշում (1998թ.)

4) 2015թ. հունվարի դրությամբ, Արարատյան ՋԿՏ-ում ջրօգտագործման պահանջարկը ծախսային եղանակով գնահատվել է 22811 հազ. ՀՀ դրամ, որից շուրջ 9019.3 հազ. ՀՀ դրամը կամ 39.54%-ը բաժին է ընկել Վեդիի գետավազանին, 12716.9 հազ. ՀՀ դրամը կամ 55.75%-ը՝ Արփայի, իսկ 1074.9 հազ. ՀՀ դրամը կամ 4.71%-ը՝ Ազատի գետավազանին.

ա. Ազատի գետավազանում ստացված ընդհանուր արժեքի 37.4%-ը (402.08 հազ. ՀՀ դրամ)՝ ձևավորվել է խմելու-կենցաղային պահանջարկով.

բ. Վեդիի գետավազանում ստացված ընդհանուր արժեքի 8%-ը (723.75 հազ. ՀՀ դրամ)՝ խմելու-կենցաղային, իսկ 55.3%-ը (4988.84 հազ. ՀՀ դրամ) ձևավորվել է ձկնաբուծության պահանջարկով.

գ. Արփայի գետավազանում ստացված ընդհանուր արժեքի 5.8%-ը (737.94 հազ. ՀՀ դրամ)՝ խմելու-կենցաղային, իսկ 91.4%-ը (11618.6 հազ. ՀՀ դրամ) ձևավորվել է ձկնաբուծության պահանջարկով:

5) Վերլուծությունների արդյունքները ցույց են տվել, որ կան զգալի տարբերություններ ջրօգտագործման պահանջարկի և ստեղծված տնտեսական արժեքի միջև: Օրինակ՝ Արփայի գետավազանում ջրօգտագործման պահանջարկը կազմել է Արարատյան ՋԿՏ ընդհանուր պահանջարկի 78.3%-ը, սակայն տնտեսական արժեքը կազմել է ընդհանուրի միայն 55.7%-ը, որը պայմանավորված է գնահատման հիմքում ընկած ջրօգտագործման վճարի դրույքաչափով, քանի որ հիդրոէներգետիկ նպատակով ջրօգտագործման համար սահմանված է զրո դրամ:

6) Ծախսային եղանակով 1մ<sup>3</sup> օգտագործված ջրի դիմաց ամենաբարձր արժեքն ապահովվում է արդյունաբերության և ձկնաբուծության ոլորտների կողմից, իսկ ամենացածր արժեքը՝ հիդրոէներգետիկայի և ոռոգման ոլորտներում:

7) Արարատյան ՋԿՏ-ում նույն ժամանակահատվածի համար ջրօգտագործման պահանջարկի եկամտային եղանակով գնահատման արդյունքները ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ Արարատի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, ՀՀ Վայոց ձորի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի տվյալների համաձայն սահմանված են Աղյուսակ 10.3-ում:

*Արարատյան ԶԿՏ-ում ջրօգտագործման պահանջարկի եկամտային եղանակով գնահատման արդյունքները 2015թ. հունվարի դրությամբ*

Աղյուսակ 10.3

| Ջրօգտագործման ոլորտը          | Ջրապահանջարկը հազ. մ <sup>3</sup> | Մասնաբաժինը ընդհանուր ջրապահանջարկում | Ոլորտային եկամուտը մլն. ՀՀ դրամ | Մասնաբաժինը համախառն եկամտում | Ավելացված արժեքը, ՀՀ դրամ/1 մ <sup>3</sup> |
|-------------------------------|-----------------------------------|---------------------------------------|---------------------------------|-------------------------------|--|
| <b>Հիդրոէներգետիկա</b>        | 855375                            | 70.29%                                | 6206                            | 8.11%                         | <b>7.3</b>                                 |
| <b>ձկնաբուծություն</b>        | 28235.7                           | 2.32%                                 | 6000                            | 7.85%                         | <b>212.5</b>                               |
| <b>Ոռոգում</b>                | 290530                            | 23.88%                                | 1032                            | 1.35%                         | <b>3.6</b>                                 |
| <b>Այլ արդյունաբերություն</b> | 3390.1                            | 0.28%                                 | 62107.8                         | 81.21%                        | <b>18320</b>                               |
| <b>Խմելու-կենցաղային</b>      | 37275.4                           | 30.63%                                | 850                             | 1.11%                         | <b>22.8</b>                                |
| <b>Ջրաբբիացում</b>            | 2038                              | 0.17%                                 | 284                             | 0.37%                         | <b>139.4</b>                               |
| <b>Ընդամենը՝</b>              | <b>1216844,2</b>                  | <b>100%</b>                           | <b>76479.8</b>                  | <b>100%</b>                   |  |

8) 2015թ. հունվարի դրությամբ, Արարատյան ԶԿՏ-ում ջրօգտագործման արդյունքում ամենաբարձր տնտեսական (ավելացված) արժեքն ապահովվել է արդյունաբերության և ձկնաբուծության արդյունքում՝ համապատասխանաբար 18320 և 212.5 ՀՀ դրամ 1մ<sup>3</sup> ջրի դիմաց: Արարատյան ԶԿՏ-ում, հիդրոէներգետիկայի և ոռոգման ոլորտները, լինելով ամենամեծ ջրօգտագործողները, ապահովել են համապատասխանաբար 7.3 ՀՀ դրամ և 3.6 ՀՀ դրամ ավելացված արժեք օգտագործված 1 մ<sup>3</sup> ջրի դիմաց:

9) Աղյուսակ 10.4-ում ներկայացվում է Արարատյան ԶԿՏ-ում 2015թ. հունվարի դրությամբ ծախսային և եկամտային եղանակներով ստացված 1մ<sup>3</sup> ջրի դիմաց ստացվող ավելացված արժեքների համեմատությունը:

*Արարատյան ԶԿՏ տնտեսության ոլորտներում 1 մ<sup>3</sup> ջրի դիմաց ստացվող ավելացված արժեքների համեմատություն*

Աղյուսակ 10.4

| Ջրօգտագործման ոլորտ | Եկամտային մոտեցում, ՀՀ դրամ/1 մ <sup>3</sup> | Ծախսային մոտեցում, ՀՀ դրամ/1 մ <sup>3</sup> | Ծախս-եկամուտ հարաբերակցության գործակից, % |
|---------------------|--|---|---|
| Հիդրոէներգետիկա     | 7.3  | -   | -   |
| ձկնաբուծություն     | 212.5  | 0.60  | 0.28                                      |
| Ոռոգում             | 3.6  | -   | -   |
| Արդյունաբերություն  | 18320  | 0.92  | 0.005                                     |
| Խմելու-կենցաղային   | 22.8   | 0.05  | 0.219                                     |
| Ջրաբբիացում         | 139.4  | 0.50  | 0.004                                     |

ա. Սույն աղյուսակից հետևում է, որ ծախսային և եկամտային մեթոդների հարաբերակցության գործակիցն ամենաբարձրն է ձկնաբուծության համար և ամենացածրը՝ հիդրոէներգետիկայի և ոռոգման համար:

**41.Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի կառավարմանն առնչվող ծախսերը**

**1) Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության կազմակերպությունների ծախսերը**

ա. Արարատյան ՋԿՏ-ում ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության նպատակով ՀՀ բնապահպանության նախարարությունը, ներառյալ՝ աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացված ծախսերը կազմել են 26.63 մլն. ՀՀ դրամ, համաձայն Աղյուսակ 10.5-ի:

*Արարատյան ՋԿՏ-ին առնչվող ջրային ռեսուրսների կառավարման մարմինների/ստորաբաժանումների պահպանման ծախսերի կառուցվածքը 2015թ. հունվարի դրությամբ*

Աղյուսակ 10.5

| <i>Կառավարման մարմին</i>   | <i>Աշխատանքի վարձավրության ծախսեր, մլն. ՀՀ դրամ</i> | <i>Ծախսերի տեղայնացման գործակից</i> | <i>Ընդհանուր ծախս, մլն. ՀՀ դրամ</i> |
|--|---|-------------------------------------|-------------------------------------|
| ՀՀ ԲՆ ջրային ռեսուրսների քաղաքականության բաժին                     | 89,92   | 0.18                                | 1.62                                |
| ՀՀ ԲՆ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն                | 124,06  | 0.17                                | 21.09                               |
| ՀՀ ԲՆ բնապահպանական պետական տեսչության ջրերի վերահսկողության բաժին | 19,43   | 0.18                                | 3.50                                |
| <i>Ընդամենը՝</i>   |   |                                     | <b>26.21</b>                        |

**2) Ջրային ռեսուրսների մոնիթորինգ իրականացնող կազմակերպությունների ծախսերը**

ա.Արարատյան ՋԿՏ-ում մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների քանակական և որակական մոնիթորինգի նպատակով պետական լիազորված մարմինների և իրականացնող կառույցների կողմից կատարված ծախսերը կազմել են 65.86 մլն. ՀՀ դրամ, համաձայն Աղյուսակ 10.6-ի:

*Արարատյան ՋԿՏ-ին առնչվող ջրային ռեսուրսների մոնիթորինգի իրականացման պահպանման ծախսերի կառուցվածքը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ (Աղբյուր՝ ՀՀ էլեկտրոնային կառավարում, ՊՈԱԿ-ների ֆինանսավորում)*

Աղյուսակ 10.6

| <i>Կառավարման մարմին</i>                           | <i>Պահպանման ծախսեր, մլն. ՀՀ դրամ</i> | <i>Ծախսերի տեղայնացման գործակից</i> | <i>Ընդհանուր ծախս, մլն. ՀՀ դրամ</i> |
|--|---------------------------------------|-------------------------------------|-------------------------------------|
| ՀՀ ԲՆ «Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ | 44,78                                 | 0.18                                | 8.06                                |

|  |        |      |       |
|--|--------|------|-------|
| ՀՀ ԲՆ «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ                | 92,31  | 0.18 | 16.62 |
| ՀՀ ԱԻՆ «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ | 228,79 | 0.18 | 41.18 |
| <i>Ընդամենը՝</i>   |        |      | 65.86 |

#### **42. Հենակերպային վիճակի ամփոփում**

1) Արարատյան ԶԿՏ-ում 2015թ. հունվարի դրությամբ ջրօգտագործման պահանջարկը կազմել է 1060496,2 հազ.մ<sup>3</sup>, ներառյալ՝ հիդրոէներգետիկ նպատակով ջրօգտագործումը, իսկ առանց հիդրոէներգետիկայի՝ 361469.2 հազ. մ<sup>3</sup>:

2) 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ Արարատյան ԶԿՏ-ում ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության համար ՀՀ պետական բյուջեից կատարված ծախսերը կազմել են 92.07 մլն. ՀՀ դրամ:

ԳԼՈՒԽ 11. ԱՐԱՐԱՏՅԱՆ ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԵՖԻՑԻՏԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

43. Արարատյան ԶԿՏ-ում ջրային ռեսուրսների կառավարման, օգտագործման և պահպանության ֆինանսական դեֆիցիտը բացահայտելու նպատակով օգտագործվել են՝ ՀՀ կառավարության 2010թ. մարտի 16-ի թիվ 353-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ Արարատի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը», «ՀՀ Արարատի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. տարեկան աշխատանքային պլանը և «ՀՀ Վայոց ձորի 2011-2014թ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. տարեկան աշխատանքային պլան»-ի մոնիտորինգի և գնահատման կիսամյակային հաշվետվությունը, 2014թ. Արարատյան ԶԿՏ-ում օգտագործված ջրի և ջրային ավազան թափված վնասակար նյութերի դիմաց ստացված վճարների վերաբերյալ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ ԲՆ տվյալներն, ինչպես նաև ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության համար ՀՀ պետական բյուջեից կատարած հատկացումները պետական լիազոր մարմիններին, այդ թվում՝ տարածքային ստորաբաժանումներին:

#### **44. Ֆինանսական դեֆիցիտի բացահայտումը**

##### **1) Կապիտալ և այլ ծախսերը**

ա. Արարատյան ԶԿՏ-ում ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության ոլորտի հետ առնչվող 2014թ. պլանավորված կապիտալ և այլ ծախսերն, ըստ ՀՀ Արարատի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. տարեկան աշխատանքային պլանի և ՀՀ Վայոց ձորի 2011-2014թ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. տարեկան աշխատանքային պլանի մոնիտորինգի և գնահատման կիսամյակային հաշվետվության, ներկայցվում են ստորև աղյուսակ 11.1-ում,

Արարատյան ԶԿՏ-ում ջրային ոլորտի հետ առնչվող 2014թ. կապիտալ և այլ ծախսերը  
Աղյուսակ 11.1.

| Միջոցառման անվանումը  | Պլանավորված ֆինանսավորումը 2014թ. համար, մլն. ՀՀ դրամ | Ֆինանսավորման աղբյուրը  |
|---|---|---|
| <i>Ջրամատակարարում և ջրահեռացում</i>  |   |   |
| ք. Վեդու, ք. Արարատի ՈԿՖ Բանավանի, գ. Արարատի, գ. Ոսկետափի ջրագծերի վերակառուցում   | 657.0   | ՀՀ պետական բյուջե, Ասիական զարգացման բանկ                               |
| Արտաշատի տարածաշրջանի 17 գյուղերի ջրագծերի վերակառուցում  | 1127.5  | ՀՀ պետական բյուջե, Ասիական զարգացման բանկ                               |
| Գառնի-Երասխ Գառնի-Ջող արտաքին ջրատարի վերակառուցում   | 8.0   | ՀՀ պետական բյուջե, Ասիական զարգացման բանկ                               |
| Թառաթումբ համայնքի խմելու ջրի արտաքին ցանցի վնասված հատվածի վերականգնում  | 3.0   | ՀՀ պետական բյուջե   |
| <i>Գյուղատնտեսություն</i>   |   |   |
| Ոռոգման ջրատարների վերակառուցում և վերանորոգում   | 30.0  | Այլ աղբյուրներ  |
| <i>Բնապահպանություն</i>   |   |   |
| Ջողի կորզիչ ֆաբրիկայում կիրականացվեն մոնիթորինգի, թափոնների հավաքման, տարածքի կանաչապատման և սարքավորումների ձեռքբերում   | 34.9  | Այլ աղբյուրներ  |
| «Խոսրովի անտառ» պետական արգելոց»-ում կիրականացվեն անտառապահպան միջոցառումներ, գիտական ուսումնասիրություններ և անտառատնտեսական աշխատանքներ   | 144.4   | ՀՀ պետական բյուջե 99.4 մլն դրամ 45 մլն դրամ Դոնոր կազմակերպություն/ԿԲՀ/ |
| Աղակալման, ճահճակալման, անապատացման դեմ պայքարելու և կրկին գյուղատնտեսական շրջանառության մեջ դնելու նպատակով ՀՀ պետբյուջեի միջոցներով Արտաշատի և Արարատի տարածաշրջանների 15 համայնքներում դրենաժների մաքրման և վերականգնման աշխատանքներ շուրջ 50.7 կմ | 75  | ՀՀ պետական բյուջե   |
| Համայնքներում արդյունաբերական, կենցաղային և վտանգավոր թափոնների առանձնացված հավաքման կազմակերպում:  | 10.0  | Այլ աղբյուրներ  |
| Ընդամենը՝   | 2089.8  |   |

բ. 2014թ. նախատեսվել էր իրականացնել մոտ 2089.8 մլն. ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ կապիտալ և այլ ծախսեր (ըստ ՀՀ Արարատի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. տարեկան աշխատանքային պլանի): ՀՀ պետական բյուջեից հատկացումները կազմել են մոտ 1073.7 մլն. ՀՀ դրամ, մասնավոր ներդրումները՝ մոտ 74.9 մլն. ՀՀ դրամ, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ աղբյուրների կողմից հատկացված միջոցները՝ 941.3 մլն. ՀՀ դրամ:

գ. Մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգի նոր ծրագրի իրականացման համար կապիտալ ներդրումները վեց տարվա համար գնահատվել են մոտ 128.8 մլն, ՀՀ դրամ կամ 21.47 մլն. ՀՀ դրամ տարեկան:

դ. Արարատյան ԶԿՏ-ում կառավարման սույն ծրագրով նախատեսված տեխնիկական միջոցառումների իրականացման համար ներդրումները վեց տարվա կտրվածքով գնահատվել են մոտ 108544,84 մլն. ՀՀ դրամ:

#### **45. Կառավարման և բնապահպանության ոլորտներում ֆինանսական մուտքերը և դեֆիցիտը**

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2014թ.» հաշվետվության տվյալների, 2014թ. Արարատյան ԶԿՏ-ում օգտագործված ջրի դիմաց ընդհանուր վճարը կազմել է 497.8 մլն. ՀՀ դրամ: Համաձայն նույն աղբյուրի, ջրային ավազան թափված վնասակար նյութերի դիմաց վճարված գումարը կազմել է 61.8 մլն. ՀՀ դրամ:

Համաձայն վերոնշյալ աղբյուրի տվյալների, 2014թ. Արարատյան ջրավազանում ջրային ռեսուրսին հասցված վնասի հատուցման գումարը կազմել է 16.2 մլն. ՀՀ դրամ:

2014թ. Արարատյան ԶԿՏ-ում ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության համար ՀՀ պետական բյուջեից կատարված ծախսերը կազմել են 92.07 մլն. ՀՀ դրամ՝ Աղյուսակ 10,5 և 10,6: Արարատյան ԶԿՏ-ում ջրային ոլորտի հետ առնչվող ուղղություններով 2014թ. պլանավորված կապիտալ և այլ ծախսերի համար հատկացումները ՀՀ պետական բյուջեից կազմել են մոտ 1073.8 մլն. ՀՀ դրամ՝ ըստ «ՀՀ Արարատի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. տարեկան աշխատանքային պլանի»-ի և «ՀՀ Վայոց ձորի 2011-2014թ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. տարեկան աշխատանքային պլանի»-ի մոնիթորինգի և գնահատման կիսամյակային հաշվետվության:

#### **46. Հնարավորությունների եզրագիծը և ֆինանսավորումն ավելացնելու պոտենցիալը**

Միջոցառումների ծրագրի իրականացման համար պահանջվող ներդրումների ֆինանսական դեֆիցիտը ծածկելու համար առաջարկվող լուծումներն են՝ համագործակցել միջազգային դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև ներքին և արտաքին հիմնադրամների հետ նպատակային՝ ծրագրի սույն նախագծով սահմանված միջոցառումները ֆինանսավորելու նպատակով հատկացումներ կատարելու ուղղությամբ, համագործակցել մասնավոր ներդրողների հետ՝ վերջիններիս կողմից սոցիալական պատասխանատվության փաթեթի շրջանակում կատարվող ներդրումները ծրագրի սույն



նախագծով սահմանված միջոցառումները ֆինանսավորելու նպատակով, ավելացնել ՀՀ պետական բյուջե մուտքերը բնօգտագործման և բնապահպանական վճարների, ջրային ռեսուրսի հասցված վնասի հատուցման գումարների հաշվին՝ ըստ անհրաժեշտության, վերանայելով բնօգտագործման և բնապահպանական վճարների դրույքաչափերը և բարելավելով բնապահպանական վերահսկողության իրականացումը, առաջարկել ազդակիր համայնքներին «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ պետական բյուջեից՝ սուբվենցիայի տեսքով տրամադրվող ֆինանսական հատկացումներն ուղղել ծրագրի միջոցառումների իրականացմանը:

## Հապավումներ

|                  |   |
|------------------|---|
| ԱՄՆ ՄՁԳ          | Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն |
| ԱԼՏ              | Առկա լավագույն տեխնոլոգիա   |
| ԱԶՄ              | Արհեստական ջրային մարմին  |
| ԲՆ               | Բնապահպանության նախարարություն                                    |
| ԲԸ               | Բաժնետիրական ընկերություն   |
| ԳՆ               | Գյուղատնտեսության նախարարություն                                  |
| ԳԿՊ              | Գետավազանային կառավարման պլան                                     |
| ԳՎՕՄ             | Գյուղատնտեսության վարման օրինակելի մեթոդ                          |
| ԵՄ               | Եվրոպական միություն   |
| ԵՏՀ              | Երկրատեղեկատվական համակարգ  |
| ԹԿՊ <sub>5</sub> | Թթվածնի 5-օրյա կենսաքիմիական պահանջարկ                            |
| ԹՔՊ              | Թթվածնի քիմիական պահանջարկ  |
| ԽՓԶՄ             | Խիստ փոփոխված ջրային մարմին                                       |
| ԿՄԿ              | Կեղտաջրերի մաքրման կայան  |
| ԿՕԱ              | Կայուն օրգանական աղտոտիչներ                                       |
| ՀԷԿ              | Հիդրոէլեկտրակայան   |
| ՀԻՌ              | Համընդհանուր իրականացման ռազմավարություն                          |
| ՀՀ               | Հայաստանի Հանրապետություն   |
| ՀՏԿ              | Հիդրոտեխնիկական կառուցվածք  |
| ՀՄԿ              | Հիդրոտեխնիկական մոնիտորինգի կենտրոն                               |
| ՄԳՇՄՊ            | Միջազգային գետավազանների շրջակա միջավայրի պահպանություն           |
| ՄԾ               | Միջոցառումների ծրագիր   |
| ՇՄՆՄԿ            | Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն            |
| ՊՈԱԿ             | Պետական ոչ առևտրային կազմակերպություն                             |
| ՉԱԻ              | Չափագրության ազգային ինստիտուտ                                    |
| ՋԹ               | Ջրօգտագործման թույլտվություն                                      |
| ՋԿՏ              | Ջրավազանային կառավարման տարածք                                    |
| ՋՇԴ              | Ջրի շրջանակային դիրեկտիվ  |
| ՋՄ               | Ջրային մարմին   |
| ՋՊԿ              | Ջրային պետական կադաստր  |
| ՋՌԿԳ             | Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն                     |
| ՋՌՀԿ             | Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում                          |
| ՋՕԸ              | Ջրօգտագործողների ընկերություն                                     |
| ՌԶՄ              | Ռիսկային ջրային մարմին  |
| ՍՊԸ              | Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն                        |
| ՍԹԿ              | Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա                               |
| ՍԶՄ              | Ստորերկրյա ջրային մարմին  |
| ՏԱ               | Տեխնիկական առաջադրանք   |
| ՓԲԸ              | Փակ բաժնետիրական ընկերություն                                     |
| ՓՀԷԿ             | Փոքր ՀԷԿ  |
| ՋՏՊԿ             | Ջրային տնտեսության պետական կոմիտե                                 |
| ՔԿՎԴ             | Քաղաքային կեղտաջրերի վերամշակման դիրեկտիվ                         |